ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՈՆԱԾԱՌԻ ԼՈՒՅՍԵՐԻ և ՋԱՐԴԱՐԱՆՔԻ ՋԱՆԱՋԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՊՁԲ-17/6/1

ք. Աշտարակ «13» Դեկտեմբերի 2017 թ.

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Թ.Շահվերդյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Եղիսաբեթ Ալմազյան Ա/Ձ-ն, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **18096500 տասնութ միլիոն իննսունվեց հազար հինգ հարյուր** ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով՝ Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 18 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարան **ՀՀ Արագածոտնի մարզ** **Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7** **ՀՎՀՀ՝ 05005705** **ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն** **Հ/Հ 900442101367** Համայնքի ղեկավար **----------Թ.Շահվերդյան**	**Ա/Ձ Եղիսաբեթ Ալմազյան** **ՀՀ Արագածոտնի մարզ ք. Աշտարակ Վ. Պետրոսյան 1/3 Հեռ. 098154608** **Բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ Աշտարակի մ/ճ** **Հ/Հ 2470703494660000** **ՀՎՀՀ 54638304** **----------Ե. Ալմազյան**

Հավելված N 1
«13» Դեկտեմբերի 2017 թ *կնքված*
N ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՊՁԲ-17/6/1 *ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
1	31521440	տոնածառի լույսեր	–	**Կից ներկայացվում է**	հատ	1500	52500	35	**Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7**	35	**Մինչև 2017թ *դեկտեմբերի 20-ը***
2	31521440	տոնածառի լույսեր 1	–	**Կից ներկայացվում է**	հատ	1500	3000000	2000	**Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7**	2000	**Մինչև 2017թ *դեկտեմբերի 20***
3	31587100	հոսանքի լարվածության կարգավորիչ	–	**Կից ներկայացվում է**	հատ	8000	64000	8	**Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7**	8	**Մինչև 2017թ *դեկտեմբերի 20***
4	39298900	զարդարանքի զանազան պարագաներ	–	**Կից ներկայացվում է**	մետր	2400	1440000	600	**Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7**	600	**Մինչև 2017թ *դեկտեմբերի 20***
5	39298900	զարդարանքի զանազան պարագաներ 1	Ա/Զ եղիսաբեթ Ալմազյան ՀՀ	**Կից ներկայացվում է**	հատ	140000	1820000	13	**Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7**	13	**Մինչև 2017թ *դեկտեմբերի 20***
6	39298900	զարդարանքի զանազան պարագաներ 2	Ա/Զ եղիսաբեթ Ալմազյան ՀՀ	**Կից ներկայացվում է**	հատ	140000	4480000	32	**Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7**	32	**Մինչև 2017թ *դեկտեմբերի 20***
7	39298900	զարդարանքի զանազան պարագաներ 3	Ա/Զ եղիսաբեթ Ալմազյան ՀՀ	**Կից ներկայացվում է**	հատ	140000	4900000	35	**Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7**	35	**Մինչև 2017թ *դեկտեմբերի 20***
8	39298900	զարդարանքի զանազան պարագաներ 4	Ա/Զ եղիսաբեթ Ալմազյան ՀՀ	**Կից ներկայացվում է**	հատ	30000	120000	4	**Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7**	4	**Մինչև 2017թ *դեկտեմբերի 20***
9	39298900	զարդարանքի զանազան պարագաներ 5	Ա/Զ եղիսաբեթ Ալմազյան ՀՀ	**Կից ներկայացվում է**	հատ	20000	80000	4	**Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7**	4	**Մինչև 2017թ *դեկտեմբերի 20***
10	39298900	զարդարանքի զանազան	Ա/Զ եղիսաբեթ Ալմազյան ՀՀ	**Կից ներկայացվում**	հատ	60000	240000	4	**Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7**	4	**Մինչև 2017թ *դեկտեմբերի***

		պարագաներ 6		է							20
11	39298900	զարդարանքի զանազան պարագաներ 7	Ա/Հ եղիսաբեթ Այվազյան <<	Կից ներկայացվում է	հատ	1900 000	1900 000	1	Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7	1	Մինչև 2017թ դեկտեմբերի 20

Բոլոր ապրանքները լինեն նոր և չօգտագործված: Ապրանքների տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է վաճառողը:

Չափաբաժին 1 Տոնածառի լույսեր

Գույնը կարմիր, լուսային գաման դեղին լույս, ջրադիմացկուն, 220V, երկարությունը 30մ,լուսատուների հեռավորությունը 6-10մմ, լուսատուների քանակը 300 հատ:



Չափաբաժին 2 Տոնածառի լույսեր 1

Գույնը դեղին, լուսային գաման կարմիր լույս, ջրադիմացկուն, 220V, երկարությունը 20մ,լուսատուների հեռավորությունը 6-10մմ, լուսատուների քանակը 200 հատ:

Չափաբաժին 3 Հոսանքի լարվածության կարգավորիչ

հոսանքի կարգավորիչ 12 վատ, 350 վոլտ,ցանցային,29 ամպեր, ՕԳԳ 83

Չափաբաժին 4 Զարդարանքի զանազան պարագաներ

Լույս առանձին ժապավեն առանձնացվող սիլիկոնե խողովակով 10վատ,12-24վոլտ 3000K/ պայծառություն 90% /

Չափաբաժին 5 Զարդարանքի զանազան պարագաներ1





Հիմքը (каркас) պետք է պատրաստված լինի մետաղյա 10x10 մմ քառանկյուն, 1,2 մմ պատի հաստությամբ խողովակով:
Միացման հանգույցները պետք է լինեն եռակցված և հղկված:
Ամրացման համար վերևի մասում, նույն հարթությամբ, պետք է լինի 6 հատ կախիչ՝ d=5մմ հաստությամբ պողպատե ճոպանի անցկացման համար: Մետաղյա հիմքը պետք է ներկված լինի 2 շերտով: Գույնը պետք է համաձայնեցվի պատվիրատուի հետ:
Չափերը ըստ գծապատկերի:
Արտաքին տեսքը ըստ նկարի:
Զարդանախշի 2 կտորների եզրային լուսային ձևավորումը պետք է լինի երկու կողմից, 6000K, 10 վատտ, 12 վոլտ, 1.2 սմ լայնությամբ LED լույսով, առանձին ջրակայուն ժապավենով և առանձնացվող սիլիկոնե խողովակով, նախատեսված բացօթյա ձևավորումների համար:
Զարդանախշի 2 կտորների լուսավորության համակարգը պետք է իրար միացված լինի LED-լույսի 2 անցումներով:
Զարդանախշի 2 կտորների դատարկ տարածությունների լուսային ձևավորման համար պետք է օգտագործվի նաև չթարթող ջրակայուն լուսեր՝ նախատեսված բացօթյա ձևավորումների համար:
Լուսային շերտը մետաղական հիմքի ամբողջ մակերեսին պետք է ամրացված լինի սիլիկոնե շերտով և պլաստմասե սեղմակներով (жгут):

2-10 մ երկարությամբ UTP 8 ջլանի պղնձե մալուխ՝ արտաքին լուսավորությանը միացնելու համար:
Կոմպլեկտի մեջ ներառում է նաև 2 հատ 220v-ը հաստատուն 12v-ի փոխակերպիչ՝ 200 վատտ հզորությամբ, ինչպես նաև զարդանախշը սյուներին միացնելու համար 9-12 մ, d=5մմ հաստությամբ պողպատե ճոպան (стальной трос)՝ ամրացնելու հնարավորությամբ:

Չափաբաժին 6 Զարդարանքի զանազան պարագաներ2





Հիմքը (каркас) պետք է պատրաստված լինի մետաղյա 10x10 մմ քառանկյուն, 1,2 մմ պատի հաստությամբ խողովակով:
Միացման հանգույցները պետք է լինեն եռակցված և հղկված:
Ամրացման համար վերևի մասում, նույն հարթությամբ, պետք է լինի 6 հատ կախիչ՝ d=5մմ հաստությամբ պողպատե ճոպանի անցկացման համար: Մետաղյա հիմքը պետք է ներկված լինի 2 շերտով: Գույնը պետք է համաձայնեցվի պատվիրատուի հետ:
Չափերը ըստ գծապատկերի:
Արտաքին տեսքը ըստ նկարի:
Զարդանախշի 2 կտորների եզրային լուսային ձևավորումը պետք է լինի երկու կողմից, 6000K, 10 վատտ, 12 վոլտ, 1.2 սմ լայնությամբ LED լույսով, առանձին ջրակայուն ժապավենով և առանձնացվող սիլիկոնե խողովակով, նախատեսված բացօթյա ձևավորումների համար:
Զարդանախշի 2 կտորների լուսավորության համակարգը պետք է իրար միացված լինի LED-լույսի 2 անցումներով:

Լուսային շերտը մետաղական հիմքի ամբողջ մակերեսին պետք է ամրացված լինի սիլիկոնե շերտով և պլաստմասե սեղմակներով (жгут):
2-10 մ երկարությամբ UTP 8 ջլանի պղնձե մալուխ՝ արտաքին լուսավորությանը միացնելու համար:
Կոմպլեկտի մեջ ներառում է նաև 2 հատ 220v-ը հաստատուն 12v-ի փոխակերպիչ՝ 200 վատտ հզորությամբ, ինչպես նաև զարդանախշը պյուներին միացնելու համար 9-12 մ, d=5մմ հաստությամբ պողպատե ճոպան (стальной трос)՝ ամրացնելու հնարավորությամբ:

Չափաբաժին 7 Զարդարանքի զանազան պարագաներ3



Հիմքը (каркас) պետք է պատրաստված լինի մետաղյա 10x10 մմ քառանկյուն, 1,2 մմ պատի հաստությամբ խողովակով:
Միացման հանգույցները պետք է լինեն եռակցված և հղկված:
Ամրացման համար վերևի մասում, նույն հարթությամբ, պետք է լինի 6 հատ կախիչ՝ d=5մմ հաստությամբ պողպատե ճոպանի անցկացման համար: Մետաղյա հիմքը պետք է ներկված լինի 2 շերտով: Գույնը պետք է համաձայնեցվի պատվիրատուի հետ:
Չափերը ըստ գծապատկերի:
Արտաքին տեսքը ըստ նկարի:
Զարդանախշի 2 կտորների եզրային լուսային ձևավորումը պետք է լինի երկու կողմից, 6000K, 10 վատտ, 12 վոլտ, 1.2 սմ լայնությամբ LED լույսով, առանձին ջրակայուն ժապավենով և առանձնացվող սիլիկոնե խողովակով, նախատեսված բացօթյա ձևավորումների համար:
Զարդանախշի 2 կտորների լուսավորության համակարգը պետք է իրար միացված լինի LED-լույսի 2 անցումներով:

Զարդանախշի դեկորների լուսային ձևավորման համար պետք է օգտագործվի նաև չթարթող ջրակայուն լուսեր՝ նախատեսված բացօթյա ձևավորումների համար:
Լուսային շերտը մետաղական հիմքի ամբողջ մակերեսին պետք է ամրացված լինի սիլիկոնե շերտով և պլաստմասե սեղմակներով (жгут):
2-10 մ երկարությամբ UTP 8 ջլանի պղնձե մալուխ՝ արտաքին լուսավորությանը միացնելու համար:
Կոմպլեկտի մեջ ներառում է նաև 2 հատ 220v-ը հաստատուն 12v-ի փոխակերպիչ՝ 200 վատտ հզորությամբ, ինչպես նաև զարդանախշը պյուներին միացնելու համար 9-12 մ, d=5մմ հաստությամբ պողպատե ճոպան (стальной трос)՝ ամրացնելու հնարավորությամբ:

Չափաբաժին 8 Զարդարանքի զանազան պարագաներ4



Գունդ մեծ ----նյութ՝ շինարարական մետաղալար 5մմ և 6մմ, չափս՝80սմ տրամագիծ, գույն՝սպիտակ, լուսավորություն՝ LED լույսեր
(Դիոդային լույսեր նախատեսված արտաքին
ձեւավորման համար)

Լուսային ձևավորումը պետք է լինի 6000K, 10 վատտ, 12 վոլտ LED լույսով, առանձին ջրակայուն ժապավենով և առանձնացվող սիլիկոնե խողովակով, նախատեսված բացօթյա ձևավորումների համար:
Զարդանախշի դեկորների լուսային ձևավորման համար պետք է օգտագործվի նաև չթարթող ջրակայուն լուսեր՝ նախատեսված բացօթյա ձևավորումների համար:
Լուսային շերտը մետաղական հիմքի ամբողջ մակերեսին պետք է ամրացված լինի սիլիկոնե շերտով և պլաստմասե սեղմակներով (жгут):
2-10 մ երկարությամբ UTP 8 ջլանի պղնձե մալուխ՝ արտաքին լուսավորությանը միացնելու համար:

Չափաբաժին 9 Զարդարանքի զանազան պարագաներ5



Գունդ փոքր ------նյութ՝ շինարարական մետաղալար 5մմ և 6մմ, չափս՝50սմ տրամագիծ, գույն՝սպիտակ, լուսավորություն՝ LEDլույսեր (Դիոդային լույսեր նախատեսված արտաքին
ձեւավորման համար)
Լուսային ձևավորումը պետք է լինի 6000K, 10 վատտ, 12 վոլտ LED լույսով, առանձին ջրակայուն ժապավենով և առանձնացվող սիլիկոնե խողովակով, նախատեսված բացօթյա ձևավորումների համար:
Զարդանախշի դեկորների լուսային ձևավորման համար պետք է օգտագործվի նաև չթարթող ջրակայուն լուսեր՝ նախատեսված բացօթյա ձևավորումների համար:

Լուսային շերտը մետաղական հիմքի ամբողջ մակերեսին պետք է ամրացված լինի սիլիկոնե շերտով և պլաստմասե սեղմակներով (жгут):
2-10 մ երկարությամբ UTP 8 ջլանի պղնձե մալուխ՝ արտաքին լուսավորությանը միացնելու համար:

Չափաբաժին 10 Զարդարանքի զանազան պարագաներ6



Հրեշտակ ------ նյութ՝ շինարարական մետաղալար 5մմ և 6մմ, չափս՝1մ 20սմ բարձրություն, գույն՝սպիտակ, լուսավորություն՝ LED լույսեր (Դիոդային լույսեր նախատեսված արտաքին
ձեւավորման համար)
Լուսային ձևավորումը պետք է լինի 6000K, 10 վատտ, 12 վոլտ LED լույսով, առանձին ջրակայուն ժապավենով և առանձնացվող սիլիկոնե խողովակով, նախատեսված բացօթյա ձևավորումների համար:
Զարդանախշի դեկորների լուսային ձևավորման համար պետք է օգտագործվի նաև չթարթող ջրակայուն լուսեր՝ նախատեսված բացօթյա ձևավորումների համար:
Լուսային շերտը մետաղական հիմքի ամբողջ մակերեսին պետք է ամրացված լինի սիլիկոնե շերտով և պլաստմասե սեղմակներով (жгут):
2-10 մ երկարությամբ UTP 8 ջլանի պղնձե մալուխ՝ արտաքին լուսավորությանը միացնելու համար:

Չափաբաժին 11 Զարդարանքի զանազան պարագաներ7



Թվեր 2018-մետաղական կոնստրուկցիան պետք է ունենան ստորև ներկայացված նկարում առկա չափերին համապատասխան երկարություն,լայնություն և բարձրություն:Կոնստրուկցիայի նյութը երկաթ,երկաթյա խորանարդաձև խողովակ՝ 3*2սմ - 100մետր երկարության և 4*3սմ - 70մետր երկարության,երկաթյա խողովակ բարակ պատերով՝13մմ տրամագիծ - 60մետր,16մմ տրամագիծ - 60մետր,18մմ - 60մետր և 8 հատ 2մմ հաստության երկաթյա ցինկապատ թիթեղ՝ չափսերը1մ*1մ:Ամբողջ մետաղական կոնստրուկցիայի գույնը՝ ոսկեգույն:Արտաքին ձևավորումը նախատեսում է օրգանական ապակի(փորագրված),լուսավորություն և ամանորյա ձևավորում:Օրգանական ապակին պետք է ունենա 5մմ հաստություն, իսկ ապակու ամբողջ մակերեսը ունենա նախշազարդ փորագրություն :Լուսավորություն՝ լուսատու խողովակ +LED լույս:Կամարի ամանորյա ձևավորումը կազմված է արհեստական եղևնու շղթայից և տոնածառի խաղալիքներից: Եղևնու շղթայի երկարությունը պետք է լինի 7մ 60սմ, տոնածառի խաղալիքների տրամագիծը 5-8 սմ,գույնը՝ ոսկեգույն և արծաթագույն:

ԳՆՈՐԴ
ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարան
ՀՀ Արագածոտնի մարզ
Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7
ՀՎՀՀ՝ 05005705
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900442101367
Համայնքի ղեկավար

----------**Թ.Շահվերդյան**

ՎԱՃԱՌՈՂ
Ա/Ձ Եղիսաբեթ Ալմազյան
ՀՀ Արագածոտնի մարզ ք. Աշտարակ Վ. Պետրոսյան 1/3 Հեռ. 098154608
Բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ Աշտարակի մ/ճ
Հ/Հ 2470703494660000
ՀՎՀՀ 54638304

---------- **Ե. Ալմազյան**

Հավելված N 2
«13» Դեկտեմբերի 2017 թ *կնքված*
N ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՊՁԲ-17/6/1 *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	31521440	տոնածառի լույսեր	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	52500	52500
2	31521440	տոնածառի լույսեր 1	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	3000000	3000000
3	31587100	հոսանքի լարվածության կարգավորիչ	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	64000	64000
4	39298900	զարդարանքի զանազան պարագաներ	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	1440000	1440000
5	39298900	զարդարանքի զանազան պարագաներ 1	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	1820000	1820000

6	39298900	զարդարանքի զանազան պարագաներ 2	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	4480000	4480000
7	39298900	զարդարանքի զանազան պարագաներ 3	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	4900000	4900000
8	39298900	զարդարանքի զանազան պարագաներ 4	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	120000	120000
9	39298900	զարդարանքի զանազան պարագաներ 5	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	80000	80000
10	39298900	զարդարանքի զանազան պարագաներ 6	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	240000	240000
11	39298900	զարդարանքի զանազան պարագաներ 7	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	1900 000	1900 000

ԳՆՈՐԴ
ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարան
ՀՀ Արագածոտնի մարզ
Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7
ՀՎՀՀ՝ 05005705
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900442101367
Համայնքի ղեկավար

---------- Թ.Շահվերդյան

ՎԱՃԱՌՈՂ
Ա/Ձ Եղիսաբեթ Ալմազյան
ՀՀ Արագածոտնի մարզ ք. Աշտարակ Վ. Պետրոսյան 1/3 Հեռ. 098154608
Բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ Աշտարակի մ/ճ
Հ/Հ 2470703494660000
ՀՎՀՀ 54638304

---------- Ե. Ալմազյան

Հավելված N 3
«13» Դեկտեմբերի 2017 թ *կնքված*
N ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՊՁԲ-17/6/1 *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N __ եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«13» Դեկտեմբերի 2017 թ *կնքված*
N ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՊՁԲ-17/6/1 *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն